

75. ՈՒՐ ԱՀՈՒՑ

Կէղնի, շէղնի՝ խուռնազ ու զալըմ թագավոր մե կէղնի, զժողովրդի արուն կը ծծե, կը կանչե ուր թասիլդարներուն, թանրի կէնե, կըսե.

— Գացե՛ք գուպեք-շուպեք, ընձի փարա բերեք, մեկ լե տեսեք նիաթ ուրանց ի՞մալ է, ընձի խաբար բերեք:

Թասիլդարներ գեղնան կէրթան զժողովրդին կը թալնին, գուպին-շուպին, բեռներով օսկի, արծաթ կը բերին լցին թագավորի չառեջ: Թագավոր կը հարցու.

— Ժողովրդի նիաթն ի՞մալ է:

— Շա՛տ տխուր ու տրտում ին, թա՛գավոր,— կըսին թասիլդարներ:

— Ընդոց նիաթին մ՛ի՛շկեք. փարա շատ ունին, էնոքի տխուր ու տրտում ին, դացե՛ք փարա բերեք:

Ժողովրդի ճար օր կը կտրի՝ գիկան թագավորին խաբար կիտան, թե ժողովուրդ՝ մեծ ու պզտիկ, մարդ ու կնիկ, գիշեր ցերեկ գոլ ու զուռնա կիտան զարկել, կուտին, կը խմին, քեֆ ու ուրախութեն կէնին:

— Է՛, կըսե թագավոր,— մկա նո՛ր գիցա, օր ժողովրդի ճար կտրեք է,— աղքատցած ին, թասիլաթ դադրեցուցե՛ք, մինակ մուխիաթ էղեք՝ շէղնի փորձանք մե գա վըր մեր գլխուն:

